

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԿԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 8

1967

ՌԱՖԱՅԵԼ ԽԵՂԱՆՅԱՆ

ՀԱՅ ՀՆԱԳՈՒՅՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Քանասիրական հետազոտությունների ժամանակ քիչ չեն այն դեպքերը, երբ որևէ հարց ձշտելու նպատակով իրքի կովան օգտագործվող հանրահայտ դրույթը սխալ է դուրս գալիս: Այդպես եղավ, երբ Հակոբ Մեղապարտի անունով հայտնի գրքերը այլ հարցի կապակցությամբ ուսումնասիրելին՝ անսպասելիութեն պարզեցինք, որ սխալ է եղել նրանց տպագրման մինչև վերջերս ընդունված հաջորդականությունը և Պարզատումարն իրքի հայ առաջին տպագիր դիրք համարելը: Այս ճշտումը, որ հրապարակվեց «Բանբեր Մատենադարանի», № 7-ում¹, որու եղբակացությունների և ենթադրությունների տեղիք տվեց հայ տպագրության մկրնավորման վերաբերյալ:

Հակոբյան գրքերի տպագրման ժամանակագրությունը որոշելիս մեր ձեռքի տակ շկար նրանցից մեկը՝ Պատարագատեատր-ը: Քանի որ բանասիրության մեջ հակոբյան հինգ գրքերից երկուսը հաստատ ընդունված էին իրքի թվակիր Պարզատումար-ը՝ 1512-ի, Պատարագատեատրը՝ 1513 թվականի հրատարակություններ, և բանի որ մեր ձեռքի տակ եղած գրքերից մեկը թվական ունեցող դիտված Պարզատումար-ն էր, ուստի և մենք միանգամայն հիմնավոր էինք համարում նրա 1512-ը մի ելակետային թվական համարելն ու ըստ այդմ որոշ եղբակացություններ անելը: Բայց այժմ, երբ երուսաղեմի մեր հայրենակիցների բարյացակամությամբ Մաշտոցի անվան մատենադարանն ստացավ Պատարագատեատր-ի մանրապատկեր ժապավենը, պարզվեց, որ այդ գրքի բացակայությունը ավելի նշանակալից է եղել մեր զննումների գործում, քան կարելի էր ենթադրել, և այդ կապակցությամբ անհրաժեշտ է դառնում մի բանի դիտողություններ անել:

Երեսնում եղած հակոբյան շորս հրատարակությունների տպագրման հերթականությունը մենք որոշել էինք այդ գրքերի մեջ էջախորագրերի համար օգտագործված ժապավենաձև շրջանակների տեսակները, գործածության հաջորդականությունը և մաշվածության աստիճանը նկատի առնելու միջոցով: Ցույց էինք տվել, որ շորս գրքերի մեջ օգտագործված են 24 ժապավենաձև շրջանակներ, որոնք իրենց ձևավորման ոճով 3 խմբի են բաժանվում: Այսինքն՝ գրքերի մեջ բազմիցս դրոշմված երեք ութնյակ շրջանակներից յուրաքանչյուր ութնյակը իր առանձին ոճն ունի: Այսպիս նորբարագրքի մեջ դործածված են իրարից տարրեր, բայց ձևավորման ոճով ընդհանուր ութ շրջանակները²: Աղբարք-ում գոր-

1 «Բանբեր Մատենադարանի», 1964, № 7, էջ 275—293.

2 Անդ, նկ. 3-ը (1—8 համարների շրջանակները):

ծածված են Աւրաքագրի այդ շրջանակները և ուրիշ 16 շրջանակներ, այսինքն՝ ուրիշ 2 ութիսակ: Ըստ որում, Աւրաքագրի 8 շրջանակները Աղքաբեր-ում նկատելիորեն մաշված են, ծայրերից շարդված, մյուս 16-ը՝ նոր³: Այս 16 շրջանակներն են օգտագործված նաև Պարզատումար-ում, Տաղարան-ում և Վասն գանի մամուլում (որ կից է Աւրաքագրին): Ըստ որում, Աղքաբեր-ի անվնաս դրոշմված այդ շրջանակներից մի երկուսը մաշվածքներ ունեն Պարզատումար-ում և ավելի շատ են մաշված ու ծայրերից շարդված Տաղարան-ում ու Վասն գանի-ում:

Մենք ցույց ենք տվել, որ ամեն ինչով անառարկելի է դառնում տպագրման հետևյալ հաջորդականությունը՝ Աւրաքագրի, Աղքաբեր, Պարզատումար, Տաղարան, Վասն գանի: Այդպիսով, պարզվեց, որ տասնամյակներ շարունակ նշանավոր շատ բանասերների կողմից իրեն առաջին հայկական տպագրություն դիտված Պարզատումար-ը, իրականում առաջինը չի եղել:

Այս ճշտումը կատարելիս՝ մեր մտքով բոլորովին չեր անցնում, որ հարցը մանրամասն ուսումնասիրած մեր նշանավոր բանասերները կարող են սխալված լինել նաև Պարզատումար-ի թվականի հարցում: Գ. Գովրիկյան, Ն. Ակինյան, Գ. Զարքանալյան, Տ. Պալյան, Կ. Գարիկյան, Լեռ, Գ. Լեվոնյան, ահա այն ականավոր բանասերների ոչ լրիվ ցուցակը, որոնք հատուկ քննել ու դնահատել են Պարզատումարի սկզբում (Ճակատին) եղած այս գրությունը՝ «Եննիարիւ. ու վարունումեկն. զիւն նուն է. և տանուտերն ի վերեն կարին է. և այլն կարգա երայ»: Այստեղից բոլորն էլ միահամուռ եզրակացության են եկել, որ հիշյալ 961-ը գրքի տպագրության թվականն է, և արդի թվականության վերածելու համար 961-ին պետք է գումարել 551 (=1512): Գովրիկյանը գրում է, «Տոնացույց կամ տոմար մը շինողին առաջին գործն է տարվույն թիվը զնել, այն տարվույն թիվը, որուն մեջն է, կամ որուն համար տոմարը կշինվի: Ուստի բոլորովին անհավանական է, թե մատենագիրն իրմէ շատ ետքն եկող տարվա մը տարեթիվը զնել յուր գրվածքին վրա: Բայց շունի նաև բնակ պատճառ մը մատենագիրն՝ անցյալ տարվությանը զնել գրած ու անշուշտ ժողովրդյան գործածության համար շինած մատենին՝ մանավանդ տոմարին վրա, որ նպատկին չեր կրնար ծառայել»: Եվ ապա «Հայտնի է ուրեմն, որ առաջիկա մատյանը տպված է կամ այն տարին, զոր կցուցանե թվականը, այսինքն 961=1512, և կամ քանի մը ամիս և գուցե նույն իսկ տարի մը հառաջ սկսած է, որպես զի նշանակված 961 տարվույն համար տոմարը պատրաստ ու գործածելի ըլլա»⁵:

Միայն Ս. Մալխասյանցն է կատածի Ենթարկել 1512-ը որպես Պարզատումար-ի տպագրության տարեթիվը և իրոք այդպիսին համարել է 1513-ը, դտնելով, որ 961-ին պետք է գումարել 552: Մալխասյանցի հետ ավելի ուշ համաձայնել է Գ. Գալիմքյարանը⁶:

Մեզ միանգամայն ճիշտ էր թվում Պարզատումար-ի տպագրման 1512 թվականը, որը հաստատել են Հակոբի տպագրությունները ձեռքի տակ ունեցած և հատուկ ուսումնասիրած մարդիկ: Խոկ Մալխասյանցի կարծիքը թվում էր ան-

³ Անդ, նկ. 4, (9—24 համարի շրջանակները):

⁴ Այդ ճամուլի մասին տե՛ս նշվ. Հոդվածում, էջ 284 և հետո:

⁵ «Հանդէս ամսօրեայ», 1889, էջ 209:

⁶ «Մշակ», 1912, № 18, 27, 57:

⁷ «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 713:

Հավանական նախ այն պատճառով, որ Հայտնված էր առանց Պարզատումար-ը (և առհասարակ Հակոբի գրքերից որևէ մեկը) տեսնելու⁸:

Քանի որ հնագույն հրատարակությունների տպագրման ճշգրած հաջորդականությունն անառարկելիորեն ասում էր, որ Աւրարագիրք-ը և Աղրարք-ը տպագրվել են Պարզատումար-ից առաջ, իսկ այս վերջինի հրատարակման թրժականն էլ որոշված էր 1512-ը, ասկա մենք հիմք ունեինք մտածելու, որ Աւրարագիրք-ն ու Աղրարք-ը (մանավանդ առաջինը) տպագրվել են 1512-ից առաջ: Այդ հիմքը տալիս էին հնագույն հայկական տպարանների տպագրական կարողության հաշվառումը, այն, որ Պարզատումար-ին նախորդած Աղրարք-ը բավական խոշոր գիրք է և այլ հանգամանքներ:

Ինչ վերաբերում է մեր ձեռքի տակ շեղած Պատարագատեր-ին, ապա նրա հակիրճ հիշատակարանը հայտնի է. «Գրեցաւ սուրբ տառս ի ԶԿԲ ի աստուածապահ քաղաք ի Վէնէժ որ է Վենետիկ ֆուանկստեան. ձեռամբ մէղապարտ Յակոբին. ով որ կարգայր մեղաց թողութիւն խնդրեցէր աստուծոյց Ռւստի, թեև գիրքը մեր ձեռքին չէր, բայց նրա տպագրության այս 962 կամ 1513 թվականը է՛լ ավելի հաստատ էր և երբեմ չվիճարկված»:

Բայ այդմ, Հակոբյան հրատարակությունների մեր որոշած հաջորդականության մեջ Պատարագատեր-ի տեղը, հասկանալի է, որ կարող էր լինել 1512-ի համարված Պարզատումար-ից հետո: Մեզ մնում էր որոշել, թե անթվակիր Տաղարան-ից (և Վասն գանի-ից) առաջ՝ թե հետո է տպվել Պատարագատեր-ը, իսկ զրա համար պետք էր ձեռքի տակ ունենալ գիրքը կամ նրա լուսանկարը:

Երբ Մատենադարանն ստացավ Պատարագատեր-ի մանրապատկեր Ժաւագինը, մեր առաջին գործը եղավ շրջանակների համեմատությունը, և պարզվեց անսպասելին: Պատարագատեր-ում օգտագործված էին Աւրարագի 8 ժապավենները (առաջին ութնյակ) և մյուս 16 ժապավեններից՝ ութը (կարելի է ասել երկրորդ ութնյակ):⁹ Աղրարք-ի հետ համեմատելիս պարզ նկատվում էր, որ Աւրարագի ութ ժապավենները (առաջին ութնյակ) Պատարագատեր-ում ավելի քիչ վնասվածքներ ունեն, քան Աղրարք-ում:

Այսպիսով, Հակոբի գրքերի մեջ գրոշմված ժապավենաձև շրջանակները պարզ ասում են, որ Հայ հնագույն գրքերը տպագրվել են հետևյալ հաջորդականությամբ:


1. Ուրբաթագիրք
2. Պատարագատեր
3. Աղթարք
4. Պարզատումար
5. Տաղարան
6. Վասն գանի

8 Պարզատումար-ի տպագրության տարեթիվի մասին «Մշակի» և «Հորիզոնի» միջն մղմածը բանագիտական ծանոթացողը շի կարող չնկատել «Մշակի» հողմածագիրների, այդ թվում Ս. Մալյասյանի հայտնած կարծիքների միտումնավոր բնույթը: Բանն այն է, որ 1912 թվականին «Մըրակը» ուղարկել էր տունել իր հիմնադրման 40-ամյակը և այդ կատակցությամբ բոլոր միջոցներով փորձում էր «Հորիզոնի» կողմից պաշտպանվող հայ տպագրության 400-ամյակի տոնակատարությունը 1912-ից տեղափոխել 1913 թվականը:

9 «Բանքեր Մատենադարանի», № 7, վերը նշվ. հողմածում (էջ 285, նկ. 4), 9—16 համարների շրջանակները:

34
Յարժամկալեսի քահանա
և աւագարազմատուցանել։
Գլարուկայսպէսզգեսաւորի
մասնեկեղեցինասրկաւարդ
աւնորեաւանդաւունն։ Խաչ
սկասարման հարիւրեւունուն
եկ։ Յիշեեաւորզուաւին։ Մի
նշեթապառ։ Ափառքհաւրեւոր
բայլեւոզունար։ Եւ ևսարկաւա
մարզնքարոգեւ։ Խնորիւսուա օ
հաւամուզ։ Խասենաւուերկա
արողու։ Եւ և քահանայնասէց
աղաւնաւ։

բայց եղանակութիւնը
ըստ պահանջման է բարձր
ըստ ըստ անշատ լին



Նկ. 2. Պատարագատեսքի-ի Դամուլի առաջին էջը, առաջին ությակի
(Արբաթազրքի) № 2 շքանակով

Այս հաջորդականությունը, որքան էլ հակադիր է ընդունված պատկերացումներին ու տեսակետներին, ինչպես և մեր արած մե երկու եզրահանգումներին, հիմնված է միանգամայն ակնառու փաստերի վրա, յուրաքանչյուրը կարող է համոզվել դրան՝ բնինելով և համեմատելով Հակոբի տպագրությունների շրջանակները¹⁰: Աւտի փաստ է, որ 1512-ի տպագրություն համարվող Պարզատումար-ը 1513-ի համարվող Պատարագատետրից հետո է տպագրվել, որ նշանակում է, թե այս երկու թվականներից մեկը ճիշտ չէ¹¹:

Պարզատումար-ը հիշատակարան կամ հրատարակության հատուկ թվական չունի, ինչպես Պատարագատետր-ը: Պարզատումար-ի ճակատին դրված 961-ը հատկապես իրեն տպագրության թվական չէ զրոված, ու թեև շատ տրամարանական է այն նաև տպագրության թվական համարելը, բայց և այնպես ու սոսկ հավանական ենթադրություն է և ոչ ավելին: Ի վերջո, հնարավոր չէ բացառել այն հանգամանքը, որ օրացուցը շնայած իր ճակատի 961 (1512) թվականին կարող է ավելի ուշ տպագրված լինել: Հիշենք, որ Արգար Դպիրի Պարզատումար-ը շնայած ճակատի 1014 (1565) թվականին տպագրվել է 1017 (1568)-ին¹²:

Այս ասելով հանգերձ մենք բնավ շնոր պնդում, որ վերջնականապես մերժում է Պարզատումար-ը 1512-ի տպագրություն համարելը: Թեև շատ ավելի հաստատ է թվում Պատարագատետր-ի 1513-ը, բայց, այնուամենայնիվ, զգուշությունը այս դեպքում էլ չի խանդարի գործին:

Միակ ստույգն առայժմ գրքերի տպագրության վերը բերված հաջորդականությունն է և այն, որ հիշյալ երկու թվականներից մեկը ճիշտ չէ: Մնացածը լրացուցիչ բննության և ձշտման կարոտ է:

Р. А. ИШХАНЯН

К ВОПРОСУ О ДАТИРОВКЕ ДРЕВНЕЙШИХ АРМЯНСКИХ ПЕЧАТНЫХ ИЗДАНИЙ

Р е з ю м е

Из изданных армянским первопечатником Акопом Мегапартом книг датированы только две: «Парзатумар» («Святцы») — 1512 и «Патарага-

10 «Սիսն ամսագրի (Երուսաղեմ) 1965 թ. 3-րդ համարում (էջ 86) մեծարգության մեջ նշանական պատճենը համարվում է հակոբյան հրատարակությունների տպագրման հայորդականությունը որոշելու մեր առաջարկած եղանակը: Նա նույնապես հայ հնագույն գրքերի վերը բերված հաջորդականությունն է սահմանում: Միաժամանակ, հողմածագիրը միակ ճիշտն է համարում Պատարագատետր-ի 1513-ը, իսկ նրանից հետո տպագրված Պարզատումար-ի 1512-ը չի գիտում իրեն տպագրության տարեթիվ: Բայց բանի որ 1513-ի Պատարագատետր-ից տպագրվել է Արքարագրեմ-ը, հարգելի բանասերը եղբակացնում է, որ հայկական տպագրության սկիզբը գարձյալ մնում 1512-ը:

11 Մեր նախորդ հոգվածում արված ենթադրությունները Արքարագրեմ-ի տպագրության մուտքան թվականի, Հակոբի տպարանի գործունեության տևաղության և հայ տպագրության սկզբնավորման մասին, որոնց հիմքում ընկած էր Պարզատումար-ը 1512 թ. տպագրություն համարելը, այժմ կասկածի տակ են առնվազմ, բանի որ կասկածի տակ է առնվազմ (եթե լաւենք մերժմում) Պարզատումար-ի տպագրության այդ ընդունված թվականը:

12 Արգարյան Պարզատումար-ը հիշատակարան ունի, ուր նշված է տպագրության մեջ (1017=1568) թվականը, որից ենթադրվում է, թե գրքի ճակատի մեջ (1014=1565) թվականը ձեռադիր Պարզատումարին-ն է:

тетр («Требник») — 1513 годом. Когда автор настоящей статьи определял очередность печатания этих книг (см. «Банбер Матенадарана», № 7, 1964), у него под рукой не было «Патрагатетра». Место «Патрагатетра» среди остальных четырех книг он определил предположительно, исходя из проставленной на ней даты, согласно которой эта книга должна была быть издана после «Парзатумара».

Изучение полученной из Иерусалима фотокопии «Патрагатетра» дало возможность уточнить очередь печатания книг Акопа.

Пока достоверна следующая очередь печатания книг Акопа: «Уrbatagirk», «Патрагатетр», «Ахтарк», «Парзатумар», «Тагаран».

R. A. ICHKHANIAN

A PROPOS DE LA CHRONOLOGIE DES INCUNABLES ARMENIENS

Hormis le „Parzatoumar“ (Calendrier ecclésiastique) et le „Pataragatetr“ (Missel), respectivement de 1512 et 1513, les incunables dus au premier imprimeur arménien Hakob Méghapart ne mentionnent pas la date d'édition. L'auteur de l'article qui se proposait, dans „Banber Matenadarani“ no. 7, 1964, de rétablir l'ordre de parution des publications de Méghapart, ne disposait pas encore du „Pataragatetr“ qu'il considérait, vu la date qu'offre ce dernier, comme postérieur au „Parzatoumar“. La photocopie reçue de Jérusalem révéla, après examen, que le „Pataragatetr“ suit le „Ourbathaguirk“ et précède le „Aghtark“, lui-même antérieur au „Parzatoumar“.

Ainsi, la succession chronologique des livres publiés par Hakob Méghapart est la suivante: „Ourbathaguirk“, „Pataragatetr“, „Aghtark“, „Parzatoumar“, „Tagharan“ (Livre des Chants).

